ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3725-Ա « 27 » սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, Ե.ՔՈՉԱՐԻ ՓՈՂՈՑ Հ.6/8 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ ՋԻՎԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գարեգին Ջիվանի Առաքելյանի (ծնված 07.06.1982թ.) դիմումը:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 18.07.2023թ. հ.ԱՏ-18072023-01-0884 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 08.11.2023թ. հ.Հ-14636 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.09.2024թ. հ.20-Ել-35752-24 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Կենտրոն, Ե.Քոչարի փողոց հ.6/8 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Երևան, Կենտրոն, Ե.Քոչարի փողոց հ.6/8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գարեգին Ջիվանի Առաքելյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 152.72քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 152.72քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Երևան, Կենտրոն, Ե.Քոչարի փողոց հ.6/8 հասցեում գտնվող 152.72քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Արհեստավորների 2-րդ փողոց հ.17 հասցեի բնակելի տանը տրամադրել «Ե.Քոչարի փողոց հ.6/8» հասցեն:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ